

ԼԵԶՈՒՄԳՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆԱԿԻ ԲԱՐԵՓՈՒԴԻԹԻՒՆԸ

Հայերէնի ուղղագրութիւնն ունի մէկ տասնեակից աւելի գարեբրի պատմութիւն։ Թէեւ ոչ որոշակի, սակայն հիմնականում յայտնի է գրաբարի ուղղագրութիւնը, որ իրացւում էր։ Միսրոպեան այբուբէնի մէջ չկային օ եւ ֆ գրերը։ Վերջինս չկար, որովհետեւ գրաբար լեզուի արտասանութեան մէջ չկար այդ հնչիւնը։ Այդ հնչիւնով սկսուող գրաբար բառեր չկան։ Գրաբար լեզուով այդ հնչիւնով սկսուող օտար բառերը տառադարձւում էին փ կամ ֆ տառերով, օրինակ, պարսկերէն Գարսալս բառը գրւում էր կամ փարսալս կամ ֆարսալս։ Օ տառը եւս չկար գրաբարում, որովհետեւ գրաբարը չունէր մաքուր օ ձայնաւորը։ Այդ օ գրի գիմաց մենք գրաբարում

բում գտնում ենք աւ երկրաբարում, ԺԳ. դարից սկսած ձեռագրերի մէջ երեւում է օ տառը իւրաքանչիւր անգամ գրաբարի աւ երկրաբարում գիմաց։ Յետագայում օ գիրը գործածւում է իրրեւ փակ վանկի մէջ աւ երկրաբարում փոխարինող։

Գրաբարի ուղղագրութեան մէջ եւ և է գրերի գործածութիւնը ևս շատ սրու չէ։ Մօտաւորապէս կարելի է ասել, որ գրաբարեան է գիրը արտայայտւում էր քըմային եւ = յե, իսկ է գիրը արտայայտւում էր եյ երկրաբարում, ԺԳ. դարում կայունացաւ նաեւ ե եւ էի ուղղագրութիւնը, ըստ որում բառասկզբին լսուող յե երկհնչիւնի գիմաց գրւում էր ե, իսկ է մաքուր ձայնաւորի գիմաց գրւում էր ե։

Է գրւում էր նաեւ բառամիջում սոփորաբար շեշտի տակ, և այն դէպքում, երբ վանկն աւելանալիս, եւ վերածւում էր ի-իւ է գրւում էր նաեւ բառավերջում։ ԺԳ. դարի ուղղագրութիւնը հիմնուած էր որոշ պայմանականութեան վրայ, քանի որ այդ դարերում գրութիւնն այլեւս չէր համապատասխանում արտասանութեանը, մինչդեռ գրաբարում ուղղագրութիւնը գերազանցապէս ֆոնետիկ էր, հնչիւնային, գրւում էին այնպէս, ինչպէս արտասանւում էին։ Օրինակ, յ կիսաձայնը գրաբարում գրւում էր բառավերջի ձայնաւորներից յետոյ, որովհետեւ այդպէս էլ արտասանւում էր. օրինակ, Տղայ, կարսայ եւ այլն։ ԺԳ. դարից սկսած յ կիսաձայնի գործածութիւնը խառնաշփոթւում է, որովհետեւ արտասանութեան մէջ բառավերջի ձայնաւորներից յետոյ այլեւս չէ կար, այդ պատճառով մտցուեց որոշ պայմանականութիւն՝ յ գրել ըստ ձայնաւորներից յետոյ, բացի դերանուններից և հրամայական եւ շանակի ձեւերից։

Այսպիսով մեր ուղղագրութեան առաջին կանոնները սահմանուել են ԺԳ. դարում, քանի որ այդ ժամանակ անհնարին էր գրել ըստ արտասանութեան։ Այդ ընդունուած ուղղագրութիւնը գործադրուեց

կանութիւն մը՝ զանազան կերպի մշակոյթներու, իրենց արշայոյսներով և վերջալոյսներով, բարձրացումներով և անկումներով։ Լուսաւոր և խաւար չըջաններ կան, սրբազան և աշխարհիկ վիճակներ։ Այժմ կ'ապրինք կարելիութիւններով յղի շրջանի մը մէջ, որ անկիւնագարձ մ'ըլլայէ աւելի վերջակէտ մըն է հին աշխարհը շինող շատ մը կարծեցեալ արժէքներու, և սկիզբ մը՝ նոր աշխարհին, որ ի ծննդեան է։

Միւս կողմէ սակայն, ո՛չ հին աշխարհը և ո՛չ ալ միջին դարերը չեն կրսուած, առնոց երկուքով կը ծնի նորը, որ հոգեկան է առաւելաբար։

Աւետարանի ոգին համբուրելի է նորէն այսօր առաւել քան երբեք, մարդկային այս տիտեր ճակատագրով մտահոգուած հոգիներուն համար։ Վասնզի, հսն ուր Աստուած չկայ, մարդը անամբողջ է և ստրուկ։

Ե. Վ. Տ.

թէ՛ զրաբար լեզուով և թէ՛ միջին հայերէսով զրուով զրականութեան մէջ։ Այդ ուղի-
 ղազրութիւնը պահ-
 ՍԵՐ ՀԻՆ պանուեց նաեւ մեր
 ՈՒՆԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ազգային զրական լեզ-
 ուի՝ նախահոկութեմ-
 րեքեան զրական լեզուի խոշոր քատաղով-
 ների և մշակողների՝ նալրանդեանի և նա-
 զարեանցի կողմից։ Այսպիսով աշխարհա-
 րար գրական լեզուն, փոխելով զրական
 լեզուի ամբողջ սխտեմը, ընդունելով ձե-
 ւարանական եւ շարահիւսական նոր սխ-
 տեմ, իր աւանդական կապը պահպանեց
 նախորդ գրական լեզուի՝ զրաբարի հեռ-
 նրանով որ, ոչ մի փոփոխութիւն չմտցրեց
 բառապատկերների մէջ, ձեռք չտուեց ուղ-
 զագրութեանը։ Այդ հասկնալի էր և ար-
 զարացի, որովհետեւ աշխարհաբար զրական
 լեզուն պատահական չէր, այլ արդիւնք էր
 հասարակական զարգացման օրինաւորու-
 թեան։

Աշխարհաբար զրական լեզուն իրապէս
 ժողովրդական լեզուներին՝ բարբառների և

զրաբարի համադրա-
 կան մի լեզուասխտեմ
 Եւր Այդ լեզուասխ-
 տեմը կառուցուած էր
 չատխելահաս, խմաստաւոր ձեռով։ Մի կող-
 մից նկատի էր առնուած այդ լեզուի հաս-
 կընալի լինելու անհրաժեշտութիւնը, այդ
 պատճառով էլ լեզուի ձեւաբանութիւնը և
 շարահիւսութիւնը իւրացուած էին ժողու-
 վըրդական լեզուից, միւս կողմից նկատի էր
 առնուած լեզուի աւանդականութիւնը, քա-
 նի որ իւրաքանչիւր լեզու բազմաթիւ դա-
 րերի բազմահազար սերունդների լեզուա-
 կան ստեղծագործութեան, կուլտուրական
 նուաճումների արդիւնք է։ Ո՛չ մի նոր սե-
 րունդ չի կարող իր համար յանկարծական
 կերպով լեզու ստեղծել։ Ամէն մի սերունդ
 ստանում է պատրաստի լեզու՝ իր նախորդ
 սերունդների կողմից մշակուած, և ինքը
 մշակելով՝ հազորդում յաջորդ սերնդին։
 Այդ պատճառով էլ տարբեր էպոխաների
 զրական լեզուներին միջև բացարձակ կտրու-
 ւածութիւն չի կարող։ Սա աւան-
 դականութիւնն է լեզուի մէջ, որ իրրեւ ան-
 հրաժեշտութիւն անխուսափելի է բոլոր տե-

ղերում, բոլոր դարերում։ Լեզուական փո-
 փոխութիւնները, սակայն, կատարուած են
 ոչ միայն էվոլյուցիոն, այլեւ ռեվոլյուցիոն
 կերպով։ Այդ արդէն կապուած է գերա-
 վանցապէս հասարակական փոփոխութիւն-
 ների հետ։ Երբ հասարակական յարաբերու-
 թիւնների ռեվոլյուցիայի հետեւանքով մի
 գոտակորդ է հանդէս գալիս իբր իշխող,
 նա լեզուի մէջ մտցնում է իր գոտակար-
 գային նախորդների տրադիցիան, որոն հե-
 տեւանքով կտորում է, մինչեւ այդ իշխող
 զրական լեզուն, և նրա մատերիալը, նիւթը
 օգտագործում իր լեզուական շինարարու-
 թեան համար։ Այդ դէպքում եւս աւան-
 դականութիւնը չի ժխտուած եւ զործօն է
 լինում։ Այսպէս՝ օրինակ, հայ բուրժուա-
 կան հասարակութեան կազմաւորումը ազ-
 գային լեզու ունենալու պահանջ առաջար-
 կեց։ Այդ լեզուն, ինչպէս ասացինք, պէտք
 է լինէր հասկնալի, իսկ ժողովրդին հաս-
 կընալի էր իր լեզուի շարահիւսութիւնն ու
 ձեւաբանութիւնը, ուրեմն՝ ազգային լեզուի
 հիմքը պէտք է լինէին ժողովրդական լեզուի
 ձեւաբանութիւնն ու շարահիւսութիւնը։ Բայց
 այդ կերպ կազմուելով՝ աշխարհաբար գրա-
 կան լեզուն կտորում էր զրաբարի ամբողջ
 սխտեմը, և այն սխտեմից վերցնում միայն
 որոշ ձեւեր և օգտագործում, օրինակ՝ ըստ
 իս, խստի, ի հարկե և այլն։ Դրա հետ մի-
 ասին այդքան մեծ փոփոխութիւնը հասա-
 րակութիւնը բոլորովին կը կտրէր նախորդ
 կուլտուրայից, որ իրրեւ զարերի եւ սե-
 րունդների մշակոյթ, պէտք է ժառանգուէր՝
 օգտագործելու համար։ Ուստի զրական լե-
 զուն պահպանեց զրաբարի ընդունուած
 ուղղագրութիւնը և բառապաշարի զգալի
 մասը։

Բուրժուական հասարակութեան չըջա-
 նում բաւականաչափ օգտագործուեց զը-
 րաբարը։ Աշխարհա-
 ԳՐԱԲԱՐԵՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ բար զրական լեզուն
 իր աւանդական կա-
 պը պահպանեց զրաբարի հետ իր բառա-
 պաշարով և իր ուղղագրութեամբ։ Սա-
 կայն, երբ աշխարհաբար զրական լեզուն
 սկսեց դառնալ մասսայական, այդ ուղղա-
 գրութիւնը վերածուեց իր հակասութեան՝
 միջակական խոչընդոտի։ Իր գծուարութեան

պատճառով նա համարեայ անմատչելի էր աշխատաւորական մասսային: Այդ ուղղա- գրութիւնը իւրացնելու համար անհրաժեշտ էր առնուազն 7-8 տարուայ դպրոցական ուսում, որպիսի հնարաւորութիւն չէր տրուում աշխատաւորին, բուրժուական հաս- րակութեան պայմաններում: Այդ պատճա- ռով էլ բուրժուական այդ ուղղագրու- թիւնը օգտաւորում էր աշխատաւոր մաս- սային վրականութեան օգուանելից և զը- րագրտութիւնից հետո պահելու համար:

Ուրեմն աշխատաւորութեան կուլտու- րական զարգացումը զէմ էր առնում մասամբ նաեւ ուղ-

ՄԻ ՀԱՅԻՒՆ՝ ՄԻ ԳԻՐ զագրութեան գծու- րութիւններին: Այդ պատճառով էլ Հայաստանում սովետա- կան իշխանութիւն հաստատուելու օրից, երբ առաջնահերթ խնդիր դարձաւ մաս- սաների գրագիտութիւնը, առաջնահերթ խնդիր դարձաւ նաեւ ուղղագրութեան ու- ֆորմը, որը կատարուեց 1922ին: Բայց այնպէս, ինչպէս շատ զայրացած անձը իր դայրոյթի օրեկտի գլխին խփելու համար բռնուցքն աւելի շատ է բարձրացնում, քան պէտք է, այդպէս էլ ուֆորմը կա- տարելիս որոշ ծայրայեղութիւն սեղի ու- նեցաւ: Նկատի առնուեց միայն մի սկզբ- բունք՝ մի հնչիւն - մի զիր: Այդ սկզբուն- քը, սակայն, ընդունելի է բոլոր այն լե- ղունների համար, որոնք նոր էին գիր ըս- տելովում իրենց համար, բայց 1500 տա- րիքի գիրը չի կարող հետեւել միայն այդ սկզբունքին, նա պէտք է այդ սկզբունքին կողքին նկատի առնի նաեւ աւանդականու- րիւնը:

Մի հնչիւն՝ մի զիր սկզբունքը առաջին հայեացքից, կարծես, հեշտացնում է ուղ- ղագրութիւնը. բայց դրա հետ միասին նա ժխտում է աւանդականութիւնը: Քսան տարուայ մեր պրակտիքան ցոյց տուեց, որ այդ սկզբունքն ունի երկու հիմնական թե- րութիւն:

1. — Խախտում է աւանդական այբու- բէնը, դուրս են ընկնում նրա միջից օ և ե ձայնաւորները:

2. — Միւնոյն բառն ունենում է տար-

բեր տեղերում տարբեր ուղղագրութիւն (գնում եմ, բերելու յեմ):

Այս երկու թերութիւնները տանելի թերութիւններ չէին: Առաջինը բաւական դժուարացնում էր գրարարի և նախահոկ- տեմբերեան գրականութեան ընթերցումը, վնասում էր լեզուի պատմականութեան բմ- բրանումին:

Երկրորդ թերութիւնը տեղի էր տալիս նոր տիպի ուղղագրական սխալներին:

Այդ երկու հիմնական թերութիւններից զատ, ուֆորմն ունէր նաեւ մի մասնակի թերութիւն. դա՝ անտեսման սկզբունքի խախտումն էր: Օրինակ՝ գրարարեան կամ հին ուղղագրութեան մէկ տառի փոխարէն (և և ո) գրւում էր երկու տառ (յե և վո): Ընդարձակում էր նաեւ ե-ին փոխարինող երկհնչիւնը՝ դառնալով եյ (եյին, եյիր, եյինք և այլն): Չկար նաեւ յ ձայնակապի գործա- ծութեան որոշակիութիւն. շատ որոշ չէր թէ, յ ձայնակապը, ու ձայնաւորից յետոյ, պէտք է զննել թէ ոչ. (կենդուրու՞թէ կենդուրույի): Ուղղագրութեան ուֆորմի վերջերս ընդունած մասնակի բարեփոխու- թիւնը վերացնում է վերոյիշեալ բոլոր թե- րութիւնները:

Ո՞րն է ուֆորմի մասնակի բարեփո- խութեան էութիւնը:

Ուղղագրական ուֆորմի մասնակի բա- րեփոխութիւնը ժողովել է միայն բառա- սկզբի ձայնաւորների եւ յ ձայնակապի ուղ- ղագրութեան նաւը, ուրիշ ոչինչ:

Այդ մասնակի բարեփոխութեամբ վե- րականգնում է աւանդական կապը նախորդ գրական լեզուների հետ, չի կտրւում ուղ- ղագրական ուֆորմի հիմնական սկզբունք- ներից և վերացնում է նրա հիմնական թե- րութիւնները:

Ուղղագրական ուֆորմի մասնակի բա- րեփոխութիւնը սահմանում է հետեւեալ նոր կանոնները.

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ 1. — Բառասկզբին յե լսելիս գրել միայն ե, իսկ և լսելիս, գրել միայն է: Օրինակ՝ ես, երեկո, երկու, եզ, երեւան, եղել, եմբարկել, երե, եփիմ, երվանդ, եղեսիա, երգ և այլն:

է), էլ, ետ, եզ, էմին, էմմա, էգուց,

եղվարդ. և այլն. (Հայերէն լեզուի մէջ եռվ սկսւող գործուն բառեր քիչ կան, դրանք համարեայ այն բառերն են, որոնք բերուած են օրինակում: Փոխառեալ բառերը գերազանցապէս եռվ են լինում, օրինակ՝ եպոս, երա, եպոխա, եսիկա և այլն):

2. — Բառակազմի մի լսելիս գրել ո, իսկ Ո լսելիս գրել Օ: Օրինակ՝

Որդի, ոգի, օս, օրբ, օրոշ, օրս, օղուլել, օրոնել, Ումիզդ, Ոսանիկ, և այլն:

Օր, օղ, օդ, օրեմ, օրօր, օձ, օվկիանոս, և այլն:

Բացառութիւն են կազմում միայն ուլ և ուլեք բառերը. գրութիւնն անփոփոխ է և միևնոյն՝ թէ՛ դրարարի, թէ՛ նոր ուղղագրութեան և թէ՛ բարեփոխութեան մէջ:

Բառամիջին ձայնաւորների ուղղագրական սրեւե փոփոխութիւն չի կատարուում, ուղղագրութիւնը վերաբերւում է միայն բառակազմի ձայնաւորներին:

3. — Բարդութեան եւ անցանցան ժամանակ ոչ մի բառ իր ուղղագրութիւնը չի փոխում:

Այդ նշանակում է, թէ ամէն մի բառ ինչպէս գրուում է անկախ, առանձին, նոյն ուղղագրութիւնը պահպանում է նաև բարդութեան և անցանցան ժամանակ, ուրիշ կերպ ասուած՝ բառապատկերը սրեւե կերպ փոփոխութեան չի ենթարկուում: Օրինակ՝

Երկու-տասներկու, երեք-տասներեք, երես-աներես, երգ-համերգ, երբ-չքերբ, երեսոյր-աներեսոյր, և այլն. եղ-վայրէջք, եղ-արեգ, եակամ-անեակամ, և այլն:

որոշ-քնորոշ, օս-չորքոսանի, ոգի-փոքրոգի, օրգի-քեռօրգի-եղբորօրգի, օղորմ-անողորմ, և այլն:

օր-այօր, օղ-անօղ, օրեւան-անօրեւան, օրօր-մեղմօրօր, և այլն:

Այս վերջին կանոնը վերացնում է ուղղագրութեան ռեֆորմի այն թերութիւնը, ըստ որի փոխում էր բառապատկերը և միևնոյն բառն, առանձին՝ տարբեր ուղղագրութիւն ունէր, իսկ բարդութեան մէջ՝ տարբեր. օրինակ՝ յերգ-համերգ, վորոշ-անորոշ և այլն: Բացի այս, ուղղագրութեան այս կանոնը նաև կը նպաստի անանցաւոր և բարդ բառերն աւելի խոր ըմբռնելուն, քանի որ ուղիղ գրելու շահագրգռութիւնը կը թելադրէ ստուգարանելու բառը, հասկնալու այդ բառը:

4. — Մի առանձին կանոն կայ նաև օժանդակ բայերի նկատմամբ: Այդ կանոնը հետևեալն է:

Օժանդակ բայի ներկայ ժամանակի ձեւերն սկսւում են եռվ, բացի երրորդ դեմքից, որ գրւում է է: Օրինակ՝ եմ, ես, ե, եմք, եք, եմ:

Օժանդակ բայի անցեալ անկատար ձեւերը սկսւում են էով:

Օրինակ՝ էի, էիր, էք, էիմք, էիք, էին:

Օժանդակ բայերի այդ ուղղագրութիւնը իմաստաւոր է, բնական է: Մասնակի բարեփոխութիւնը որեւէ փոփոխութիւն չի մտցնում օժանդակ բայի եղակի առաջին եւ երկրորդ, յոգնակի առաջին եւ երկրորդ ձևերի մէջ. այդտեղ ուղղագրութիւնը միևնոյն է թէ՛ դրարարում, թէ՛ աշխարհաբարում և թէ՛ նոր ուղղագրութեան մէջ: Տարբերութիւնը միայն յոգնակի երկրորդ դէմքի մէջ է, որ դրարարում ու աշխարհաբարում եռվ է (էք), իսկ նոր ուղղագրութեամբ եռվ (եք): Այդ տարբերութիւնը լուծուած է յօգուտ նոր ուղղագրութեան, որովհետև յոգնակի երկրորդ դէմքում եռվ գրելը որեւէ կերպ չի հիմնաւորւում:

Եղակի երրորդ դէմքի են ենթարկուում է վերևում բերուած 1/ին կանոնին, այսինքն՝ բառակազմին ե լսուելիս գրել ե, իսկ ե բառը ինքն առանձին բառ է և բառակազմ է, ուրեմն և պէտք է լինի ե: Օժանդակ բայի անցեալ ժամանակի ձևերն եռվ սկսելը նոյնպէս ենթարկուում է 1/ին կանոնին և նորութիւնն չէ:

Բարդութեան և անանցան մէջ այդ ուղղագրութիւնը չի փոփոխում. օրինակ՝ չեմ, չես, չե, չեմք, չեք, չեն. չեի, չեիր, չեք, չեիմք, չեիք, չեին, էական և այլն:

5. — Յ ձայնակապը գործածուում է միայն ա եւ ո ձայնաւորներից յետոյ:

Այս կանոնը հասկնալու համար պէտք է նախ գիտնալ, որ մեր յ հնչիւնը կարող է կազմել երկհնչիւններ յա, յո, յու, յի, և այ, ոյ, ույ, էյ: Օրինակ՝ ոսկյա, յոք, յուր, այս, յոյ, բոյս, դէյրա:

Բացի այս, յ հնչիւնը կապում է երկու ձայնաւորներ, որպիսի դէպքում կոչւում է ձայնակապ. օրինակ՝ այս (կայա-րան), այո (այո), այու (կայուն), այե (հմայել), այի (կային):

Ոյն (նոյնամբեր), ոյա (գոյական), ոյի (խոյի), ոյու (գոյութիւն)։

Այս բառը օրինակներում չի կապում է՝ ա և ու ձայնաւորները միւս ձայնաւորների հետ, նա անկախ է։

Նոր ուղղագրութեան օրէնքների համաձայն յն կարող էր կապել նաև ե ձայնաւորը միւս բառի ձայնաւորների հետ, օրինակ, էյա (քուէարկութիւն), էյի (էյիմֆ, էյիմֆ, էյիմֆ), էյու (գործունէութիւն), ևայլն։ Ռեֆորմի մասնակի բարեփոխութեամբ ձայնակապը գրւում է միայն ա և ու ձայնաւորներից յետոյ։

չի գրւում՝ ե եւ ու ձայնաւորներից յետոյ։

Օրինակ՝ ինչպէս հին ուղղագրութեամբ և նորնպէս և այժմ գրւում է կային, կալարան, այո ևայլն։

Բայց՝

նոր ուղղագրութեամբ գրւում եր էյակ, էյուրյուն էյի, էյիւ, էյիմֆ, էյիմֆ, էյիմֆ, գաւմունէյուրյուն, մարգարէյուրյուն և այլն։

Այժմ գրւում է հակ, հուրիւն էի, էիւ, էր, էիմֆ, ևայլն, գործունէյուրյուն, մարգարէյուրյուն և այլն։

Ուղղագրութեան մասնակի բարեփոխութիւնը, ինչպէս ասացինք, չի վերաբերում բառամիջի ձայնաւորներին։ Բառամիջի ձայնաւորների ուղղագրութիւնը, ինչպէս և ը ձայնաւորի բառասկզբի ուղղագրութիւնը մնում է անփոփոխ, այսինքն այնպէս, ինչպէս ընդունուած է նոր ուղղագրութեան մէջ։

Առաջին հայեացքից թւում է դժուար, թւում է թէ շփոթմունք կարող է ստեղծել, սակայն վերոյիշեալ հինգ պարզ կանոնների խրատումը և շատ կարճատե պարակիրկան շատ հեշտութեամբ խրացնել կտան ուղղագրութեան մասնակի բարեփոխութիւնը։

Ա. ՂԱՐԻՊԵԱՆ

(Լեզուաբան, Խիսուրիւնների Տոբոյ)

ՆԱԽԱՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ^(*)

ՆԻ

ՆԱԽԱՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՈՒՐՈՒԱԳԻԾԸ

Լեզուական այն վիճակը որ ներկայացնում էր հայերէնը Հնդեւրոպական նախաայրենիքից հեռանալու միջոցին, կոչւում է նախահայերէն։ Ապագայում այդ լեզուն պիտի կրէր երկու կարգի փոփոխութիւն. ա. Լեզուական ձևերը ենթարկուելով բարեշրջութեան հրամայական օրէնքների, դարէ դար պիտի ստանային նոր կերպարանք, մինչեւ հասնէին այն ձևին, ուր գտնոււմ ենք այսօր։ Բ. Շփոթելով օտար ցեղերի և լեզուների հետ, կամ ենթարկուելով նրանց քաղաքական կամ քաղաքակրթական ազդեցութեան, հայերէնը պիտի ընդունէր նրանցից նորանոր տարրեր։

Այն ձևերը՝ որոնք կրելով առաջին կարգի փոփոխութիւնները, կազմում են այսօր նախահայերէնի աննդհատ շարունակութիւնը, կոչւում են բնիկ ձևեր. իսկ այն ձևերը՝ որոնք իրրեւ նոր տարրեր աւելացել են մեր լեզուի մէջ, կոչւում են օտար կամ փոխառեալ ձևեր։ Արդի հայերէնը, ինչպէս և որեւիցէ դարի հայերէնը, ներկայացնում է այդ երկու կարգի ձևերի (բնիկ և փոխառեալ) գումարը։

Հայերէն լեզուի պատմութեան և նրա հետ զուգընթացաբար հայ կեանքի ուսումնասիրութեան համար կարեւոր է երեւան հանել նախահայերէնի վիճակը։

Ինչ միջոց ունինք դրա համար։

Հայերէնը աւանդուած է մեզ շատ ուշ ժամանակ. դժբախտաբար որեւէ օտար աղբիւր էլ չէ գտնուած մինչեւ այժմ, որ հայերէնի հնադրոյն վիճակի մասին որեւէ լուսաբանութիւն ընձեռէր մեզ։ Ուստի մնում է մեզ զիմեզ զիտական մեթոդների։

Վերելում տրուած սահմանից հետեւում է՝ որ եթէ հայերէնի դանձարանից դուրս հանենք զանազան ժամանակ փոխառեալ

(*) Արցախում՝ մեծամեծ նեղիմակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Կ. Գլուխ)։